դիպում են նաև զիգզագներ և յանց պարունակող կիսաշրջանաձև զարդեր։ Նախշը ավարտվում է յայն զիգզագավոր գծով։ Քրեզանները զարդարված են ուղղահայաց և հորիզոնական գծազարդ ռոմբերով։ Քնորոշ զարդանախշերից են նաև պալաքները[25]։ Հետաքրքիր են շախմատաձև զարդը և երկշարք ռոմբաձև մոտիվները։

Նշված կավամանների տարածումը դուրս է գալիս Հայաստանի սահմաններից։ Դրանք հանդիպում են Վրաստանի Քրիալեթիի շրջանում[26]։

«Թեյնիկներ» հանդիպում են նաև միագույն խեցեղենի մեջ։ Զարդերը եռանկյուններ են, որոնք լցված են ցանցով։ Կան և անզարդ ամաններ (աղյուսակ II, 8, ՊՊԹ, ինվ. № 556—7 և այլն)։

Անհրաժեշտ է նշել Մուխաննաթ-Թափա բազմաշերտ բնակատեղիի գունազարդ խեցեղենը[27], որը հայտնաբերված է բեկորներով, ուստի ձևերի մասին խոսել դժվար է։ Տիրապետող զարդերից են խաչաձևվող թեք և ուղիղ գծերը, հորիզոնական զուգահեռ գծերը, միայնակ և ուղիղ ու ալիքավոր գծերի հետ հանդիպող պարույրները։

Այսպիսիք են Հայաստանի գունազարդ խեցեղենի հիմնական գծերը և զարդանախշերը։

Կուտակված հնագիտական նյութը հիմք է տալիս գունազարդ խեցեղենը համարել տեղական. նրա արմատները գնում են մինչև վաղ բրոնզի դարաշրջանը, այն գոյություն է ունեցել դրեթե մինչև II հազարամյակի կեսը. հետագայում ասպարեզից վերանում է և նորից հանդես է գալիս ուրարտական ժամանակաշրջանում[28], ապա հելլենիզմի դարաշրջանում[29]։ Այժմ Անդրկովկասում կա գունազարդ խեցեղեն պարունակող ավելի քան 40 հուշարձան։ Պեղված հուշարձաններում բացված կուլտուրական շերտերի ուսումնասիրությունը (Մուխաննաթ-Թափա, Ուզերլիկ-Թափա) ցույց է տալիս, որ գունազարդ խեցեղենը պատկանում է III հազարամյակի վերջին և II հազարամյակի առաջին կեսի միջև ընկած ժամանակաշրջանին։

Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

---

[25] К. Х. Кушнарева, Նշվ. աշխ., էջ 141, նկ. 2—2։

[26] Б. А. Куфтин, Նշվ. աշխ., աղյուսակ LXXXI։

[27] Б. Б. Пиотровский, Նշվ. աշխ., էջ 91, տե՛ս նաև Ե. Բաբրուրդյան, Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը։

[28] Б. Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 91։

[29] Գ. Տիրացյան, Հայվան ամրոցի 1962 թ. պեղումները. ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1963, 12, էջ 103—110։

ՇՐԵՇ-ԲԼՈՒՐԻ ԵՎ ՔՅՈՒԼ-ԹԱՓԱՅԻ ԽԵՑԵՂԵՆՆ ՈՒ ՆՐԱ ԱՐՎԵՍՏԸ

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան խեցեղենի շարքում առանձնահատուկ տեղ է բռնում Շրեշ-բլուրի խեցեղենը, որն իր ձևով, կատարման տեխնիկայով և հատկապես զարդանախշումով կարելի է այդ դարաշրջանի արվեստի բարձր նմուշների շարքը դասել։

Շրեշ-բլուրից և Քյուլ-Թափայից հայտնաբերված խեցեղենն ըստ ձևի հիմնականում կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Ծոմասանի մեծ և փոքր կճուճներ-գավաթներ (աղ. I, նկ. 1, 2, 3, 5, 6, II, նկ. 1—6)։

2. Մեծ եռմասանի սափորներ։

3. Օջախիկ-հենակներ բարձրադիր լայն շուրթերով (աղ. I, նկ. 4, 7)։

4. Եռոտանի պատվանդաններ (աղ. II, նկ. 7)։

Վերոհիշյալ բոլոր խմբերի խեցեղենին բնորոշ են լայնակոս խոր զարդանախշեր։

Հատուկ ուշադրությամբ և մեծ վարպետությամբ են կատարված առաջին խմբի միջին մեծության և փոքր եռմասանի կճուճները, որոնց շուրթերն ուժեղ դեպի դուրս են ճկվում և առանց բացառության եղերված են նուրբ և նեղ հորիզոնական ժապավենով։ Բոլորն ունեն մի փոքր ներճկված գլանաձև վիզ, ուռուցիկ փոր և դեպի ցած նեղացող ներքնամաս (այդ պատճառով էլ անվանում ենք եռմասանի)։ Կողքից նայելիս պարզ գծագրվում է անցումը վզից դեպի ուռուցիկ փորը, որը շեշտված է հորիզոնական, նեղ, խորաքանդակ դոտիով և ուռուցիկ փորից դեպի ներքնամասը, շեշտված սուր եղրով։ Մեծամասնության հատակը շատ փոքր է և ներճկված։

Այս խմբի կճուճների չափերը սանտիմետրներով հետևյալն են.

Կոլեկցիոն № №	Բարձրություն	Բերանի տրամ.	Իրանի տրամ.	Հատակի տրամ.	Վզի բարձրությունը
602	5,8	6,8	8	2	—
644	7	9	12	3	2
601	8,4	8,5	10	3,5	3
600	9,5	9,5	11	2,5	2,5
590	10,5	12,5	13	2,2	3,5
599	11,5	13,5	15	3	4
604	10	—	14		
591	10,5	12	14	2,2	3
766 113	8	10	11	3	—
607a	11	10	11		—
607b	9,5	10	11	3	—

Եռմասանի կճուճներն ունեն տարբեր տիպի կանթեր. շուրթից սկսվող և վզի հիմքում ավարտվող ժապավենաձև կանթ (№ 590), կիսագնդաձև կանթեր, որոնք երկու տիպի են՝ խողովակաձև անցքով և խուլ, որոնց վրա անցքի փոխարեն փոսիկներ են արված։ Վերոհիշյալ կանթերը կպցված են կամ վզի հիմքում (№ 599), կամ ուռուցիկ փորի կենտրոնում (№ 591, 602)։

Բացի կիսագնդաձև խուլ կանթերից հանդիպում են նաև ձվաձև (№ 766/113) կանթեր, ինչպես և գնդաձև կենտրոնում փոքրիկ կլոր ելուստով կանթ (№ 602), որը եղակի օրինակ է։

Որոշ կճուճների շուրթեր կանթի կողմում կտցաձև դեպի ցած են կախված (№ 591, 599)։

Խեցեղենի երկրորդ խումբը կազմում են մեծ եռմասանի սափորները, որոնք ձևով կրկնում են առաջին խմբի գավաթներ-կճուճներին, միայն չափերով մեծ են նրանցից։ Այդպիսի երեք սափորների մասեր ունենք (№ 607 1, 2, 3)։

Երրորդ խմբի օջախիկ-հենակները ունեն բարձրադիր կարճ, դեպի դուրս լայնացող շուրթեր, կլորացող իրան և լայնադիր տափակ հատակ։

Նման օջախիկ-հենակներից մեկի (№ 603, աղ. I, 7) կեսն է պահպանվել, շուրթը մի փոքր վեր է և դեպի դուրս ճկված, իրանի հետ անկյուն է կազմում, որտեղ տեղավորված է խուլ կանթը։ Ունի բարձրադիր իրան (բարձրությունը 17 սմ, շուրթի տրամագիծը մոտավորապես 32 սմ է)։

Пряслиця I

Երկրորդ օջախիկ-հենակի (№ 593, աղ. I, 4) միայն կլորացող իրանն է պահպանվել, իսկ շուրթից մի փոքր մաս, որից զգացվում է, որ այն նախորդի նման բարձրադիր է և դեպի դուրս լայնացող։ Շուրթի և իրանի միացման մասում եղել են երկու փոքրիկ օղակաձև կանթեր, շատ փոքր անցքերով։ Կանթերից մեկն ամբողջական է, իսկ մյուսի հիմքն է պահպանվել (օջախիկ-հենակի պահպանված մասի բարձրությունը մինչև շուրթը 7 սմ է, իրանի տրամագիծը՝ 17 սմ, հատակի տրամագիծը՝ 14,5 սմ)։

Այս կավամանները օջախիկ-հենակներ կամ փոքրիկ կրակարան ենք անվանում նախ այն պատճառով, որ ըստ կառուցվածքային որոշ հատկանիշների (բավականին հաստախեցի են, խոր, ծանր, շուրթերը հաստ) հարմար չեն հեղուկի կամ ճաշի համար։ Բացի այդ Էլարի դամբարաններում մոտավորապես նույն տիպի, բայց ավելի կատարելագործված ամանները, որպես կանոն դրված էին կափարիչով ծածկված կճուճների տակ[1]. այդ հանդամանքը մեզ ենթադրել տվեց, որ նրանք կարող էին ծառայել որպես փոքրիկ օջախիկ-հենակներ, թերևս պաշտամունքային նշանակությամբ։

Այս ենթադրությունն ավելի համոզիչ դարձավ Գառնիում, 1962 թ. պեղումների ժամանակ նման տիպի մեծ չափերի օջախի մասը կազմող հենակի հայտնաբերումով (№ 2235/93)։ Վերջապես որոշ զուգահեռներ կարելի է տեսնել նաև 1963 թ. Արմավիրի Մոխրաբլրում հայտնաբերված և Նախիջևանի Քյուլ-Թափայի լայնադիր շուրթերով օջախների հետ համեմատելիս։

Խեցեղենի չորրորդ խումբը կազմում են եռոտանի պատվանդանները (աղ. II, 7), որոնց վրա դրվել են կավամաններ, գուցե և պաշտամունքային նշանակություն ունեցող այլ իրեր, արձանիկներ և այլն։

Այս պատվանդաններն ունեն եռանկյունաձև տափակ հորիզոնական մակերես, որի երեք անկյուններից սուր եզրերով դեպի ցած իջնող ուղղահայաց մակերեսներն ավարտվում են կամարներով իրար հետ կապվող երեք ոտքերով։ Որպես կանոն, կամարաձև ավարտվող այդ ուղղահայաց մակերեսներից մեկը, որը կարելի է անվանել երեսի կողմ կամ ճակատ, զարդարուն է։ Նման մի քանի տարբեր պատվանդանների մասեր են հայտնաբերվել։

Վերականգնված եռոտանիներից մեկի (№ 605) եռանկյունաձև հորիզոնական մակերեսի եզրերի երկարությունը 18—20 սմ է, բարձրությունը՝ 11 սմ։ Ոտքերը միմյանցից հեռու են, մի կողմում 28 սմ-ով, մյուս երկու կողմերում՝ 25 սմ-ով։ Մյուս եռոտանիները (№ 766/113, 117, 607/22, 605) թերի են և դժվար է նրանց չափերը որոշել։

Բացի վերոհիշյալ չորս հիմնական խմբերից կան նաև թասի բեկոր (№ 607_{31}), քրեղանի մաս (№ 607_{32}), ուղղահայաց տափակ պատերով կավամանի մաս (№ 607_{33}) և հաստախեցի մեծ կավամանի բեկոր, որի ձևը որոշելը դժվար է։

Այսպիսով Շրեշ-բլուրից և Քյուլ-թափայից հայտնաբերված խեցեղենը պատրաստված է ձեռքով և մշակմամբ կատարյալ է։ Կավամանների մեծամասնությունը նրբախեցի է, բարձրարվեստ և լավ թրծված։ Կավը բարձրորակ է, մաղած, լավ հունցած։ Բոլոր կավամանների մակերեսը կոկած, հղկած է և զար-

---

1 Է. Վ. Խանզադյան, Մետաղագործության առաջին փաստերը Հայկական լեռնաշխարհում Նագույն բրոնզի դարաշրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 304, նկ. 4։

դարված լայնակոս ներհկված զարդանախշերով, որոնք փորվել են թաց կավի վրա, դեռևս թրծելուց առաջ։

Կավամանները ծածկված են սև փայլաներկով (բացառությամբ Քյուլթափայից հայտնաբերված մի բեկորի, № 1227/16, որը կարմիր-փայլեցրած է)։ Դժվար է ասել, թե այդպիսի արտակարգ, երբեմն հայելանման փայլը ինչ եղանակով են ստացել, արդյոք հենց սև ներկն է իր մեջ այդ փայլը պարունակել, թե ներկելուց հետո որևէ փայլ են քսել, կամ թե այդ բոլորը թրծման տեխնիկական որևէ պրոցեսի հետ կապված երևույթ է։ Այդ մասին դրականության մեջ կան տարբեր կարծիքներ։ Սակայն էականն այն է, որ նրանք մինչև այսօր էլ պահպանել են իրենց գույնը և փայլը։

Կավամանների աստառն ի հակադրություն արտաքին միապաղաղ սև մակերեսի, ներկված է տարբեր գույներով՝ մարմնագույն, շագանակագույն, մոխրագույն, վարդագույն, դեղին, սև և անգամ մանիշակագույն։

Որպես կանոն զարդանախշված է կավամանի միայն մեկ երեսը։ Զարդանախշերը պատահական, ցաք ու ցրիվ զարդեր չեն, այլ կուռ, սիստեմատիկ և իմաստավորված կոմպոզիցիաներ, որոնցում, ինչպես մեզ թվում է, իրենց արտահայտությունն են գտել երկիրը՝ իր ջրերով, բուսականությամբ, լեռներով և մասամբ որոշ երկնային մարմիններ։ Այս մոտիվները գերազանցապես համատեղ են հանդես գալիս, սակայն կան նաև առանձին, միայն բուսական մոտիվներով, կամ առանձին համակենտրոն շրջաններով և ակոսներով կազմված կոմպոզիցիաներ։ Բուսական մոտիվներով զարդարված են գերազանցապես առաջին խմբի գավաթներ-կճուճները։

Կճուճիկ-գավաթներից մեկի վրա (№ 600, աղ. I_1) երկարավուն, աղեղնաձև ակոսով նշված հիմքից վեր են բարձրանում տերևներ և ցողուններ, որոնք ավարտվում են պարույրաձև գլխիկներով։ Շատ հավանական է, որ այս կոմպոզիցիայով բրուտ-արվեստագետը ցանկացել է պատկերել ծաղկի թուփ։

Ծաղիկների և տերևների հաջորդականություն է ներկայացնում մեկ այլ զարդանկար (№ 644, աղ. I_2)։ Գավաթներից մեկի վրա (№ 599, աղ. I_5) պատկերված է դարձյալ վերը նկարագրված բուսական թուփն աղեղնաձև հիմքով և եռաթև ցողուններով, որոնք ավարտվում են տերևներ կամ դուցե և ծաղիկներ պատկերող զարդանկարով։ Այստեղ կոմպոզիցիայի կենտրոնը զարդարված է երկար և կարճ ակոսիկների համադրությամբ։

Նման գավաթներից մեկը (№ $607/_{17}$, աղ. I, 3) զարդարված է ցորենի հասկը պատկերող զարդանախշով։

Վերոհիշյալ բոլոր բուսական կոմպոզիցիաները կատարված են հյութեղ, թանձր շտրիխներով։ Նրանց մեջ կա շարժում, բնության շունչ։

Մյուս կճուճների վրա բրուտ-արվեստագետը բուսական ցողուններով կազմված հիմքի վրա կառուցում է մի նոր կոմպոզիցիոն կմախք, այդ կոմպոզիցիայի հիմքը կազմում է հորիզոնական և թեք ակոսներով կառուցված նավակը (այն կարող էր ոչ միայն ջրի, այլ հողի, երկրի խորհրդանիշ ծառայել), որի կենտրոնից սկիզբ առնող և անկյուն կազմող կորագիծ, դեպի վեր բարձրացող մեկթև, երկթև և եռաթև ժապավեններն ավարտվում են ուղղահայաց երկարավուն ակոսից կախված առանձին պարույրով (№ 603, 607 $_{1, 4, 18}$, 766/113, աղ. I, $_7$, II, $_1$, $_4$) ակոսածածկ քառանկյունիներով (№ 590, 593, 607 $_6$, աղ. I, $_4$) կամ այս երկուսի համադրությամբ առաջացած ֆիգուրներով (№ 591,

607 7, աղ. I, 6, II, 2)։ Վերոհիշյալ կոմպոզիցիոն կմախքը զուցե և կենաց ծառի ամենանախնական արտահայտություններից մեկն է։

Այս կոմպոզիցիոն կմախքը, որը հիմք է ծառայել Շրեշ-բլուրի և Քյուլ-թեփայի բոլոր ձևերի կավամանների զարդանախշերի համար, բրուտները զարդարել են նաև այլ մոտիվներով, այսինքն կոմպոզիցիոն կենտրոնը հարստացրել են համակենտրոն շրջաններով, ճառագայթաձև ակոսներով, պարույրներով, այսպիսով, մեր կարծիքով, երկիրը, ջուրը, բուսականությունն արտահայտող կոմպոզիցիոն հիմքի վրա բրուտն ավելացնում է հավանաբար լեռները, երկնակամարը, արևը արտահայտող զարդամոտիվներ։ Գավաթներից մեկի (№ 607 4, աղ. II, 1) զարդանկարի կոմպոզիցիոն կենտրոնում արված է երկշրջան համակենտրոն շրջանագիծ, որի գլխին փորված հորիզոնական ժապավենից վեր տարածվում են ճառագայթաձև դասավորությամբ ակոսիկներ։ Հավանաբար այս խմբով պատկերված է արևը իր ճառագայթներով։ Մեկ այլ գավաթի (№ 590) զարդանկարի կոմպոզիցիոն կենտրոնը հատվում է վերևում սուր անկյուն կազմող երկթև ժապավեններով, որը կարող է ինչպես լեռների, այնպես էլ երկնակամարի արտահայտությունը լինել։ Որոշ գավաթների զարդանախշերի կոմպոզիցիոն կենտրոնին բնորոշ է զարդամոտիվների մեծ բազմազանություն։ Օրինակ՝ իրար դիմաց գտնվող պարույրները միացնող աղեղնաձև ժապավենից ցած տարածվող ճառագայթաձև ակոսներ (№ 607/5, աղ. II, 2), համակենտրոն շրջանագծից վեր զույգ ակնոցաձև երկծալ պարույրներ (№ 607), կոմպոզիցիայի վերջավորությունը կրկնող զարդամոտիվ (№ 591, աղ. I, 6) և այլն։

Կոմպոզիցիան մի փոքր բարդացված է գավաթներից մեկի վրա (№ 766 113, աղ. II, 4)՝ նախ հիմքի նավակն աղճատված է, այսինքն նավակի փոխարեն նրա մասերն են պատկերված, իսկ կենտրոնում երկու սրածայր ավարտվող ակոսներով կազմված դաշտում գետեղված է փոքր երկգալար պարույր։ Այդ դաշտից դուրս վերևում դեպի աջ փորված է կլոր փոսիկ, իսկ դեպի ձախ՝ համակենտրոն շրջանագծեր։ Վերոհիշյալ զարդանախշերի կոմպոզիցիան ավելի մոնումենտալ և քարացած վիճակով պատկերված է մեծ սափորների և օջախիկ-հենակների վրա։

Մի մեծ սափորի մասի (№ 607₁) կոմպոզիցիոն կենտրոնը զարդարված է եռաշրջան համակենտրոն երեք շրջանագծերով, որոնցից մեկը տեղավորված է երկթև սուր անկյուն կազմող ժապավեններով առաջացած քառակուսի դաշտում, իսկ երկուսն այդ ժապավեններից վեր՝ աջ և ձախ կողմերում։

Օջախիկ-հենակներից մեկի (№ 539, աղ. I, 4) եռաթև ժապավեններով առաջացած քառակուսի դաշտում տեղավորված է երկշրջան համակենտրոն շրջանագիծ, իսկ վերին ժապավենները երկու կողմից ավարտվում են երկգալար պարույրներով։ Ի տարբերություն մյուս բոլոր կավամանների, եռաշրջան համակենտրոն շրջանագծերով են զարդարված նաև հիմքի նավակի աջ և ձախ կողմերը։ Մյուս օջախիկ-հենակի (№ 603, աղ. I, 7, թերի է) զարդանախշերի կոմպոզիցիային բնորոշ են բազմազալար պարույրներ, որոնցով ավարտվում են նաև կոմպոզիցիայի վերջավորությունները։

Եռոտանի պատվանդանները (№ 605, 607₂₂, 766/117) նույնպես զարդարված են վերը նկարագրված լայնակոս համակենտրոն շրջանագծերով, պարույրներով, անկյուն կազմող ժապավեններով, ակոսների տարբեր խմբավորումներով (աղ. II, 7) և այլն։



Աղյուսակ II

Այստեղ զարդանախշերը առնված են շրջանակների, ժապավենների և կեռագիծ անկյունների մեջ։

Բացի վերոհիշյալ կոմպոզիցիաներից Շրեշ-բլուրի խեցեղենում սակավ հանդիպում են և առանձին զարդանկարներ, օրինակ՝ իրար դիմաց պարույրաձև գլխիկներով և ակոսավոր քառանկյունաձև վերջավորություններով զարդանախշ (№ 601, աղ. II, 5), կամ անկյուն կազմող և դեպի վեր բարձրացող զույգ ժապավեններ, որոնք ավարտվում են դեպի աջ և ձախ ուղղված ակոսավոր եռանկյուններով (№ 602, աղ. II, 6)։ Բավականին շքեղ է զարդարված գավաթներից մեկը (№ 604. աղ. 11, 3), որի զարդանախշերի կոմպոզիցիան բաղկացած է խաչաձևվող երկարավուն սրածայր ակոսներով առաջացած դաշտերից և նրանցում գետեղված համակենտրոն շրջանագծերից և սրածայր ակոսիկներից։

Այսպիսով Շրեշ-բլուրի և Քյուլ-թափայի խեցեղենի համար բնորոշ է խոր, լայնակոս, հյութալի շտրիխներով կատարման տեխնիկան։ Ամբողջ խեցեղենում միայն մեկ օրինակ կա (№ 1227 1), որի վրա զուգորդված է երկրաչափական ուղղագիծ զարդանախշերի ժապավեն, խոր լայնակոսի հետ, ոնդ որում այդ ուղղագիծ երկրաչափականն էլ կատարված է ոչ թե գծելով, որը յուրահատուկ է խեցեղենի ավելի զարգացած փուլերին, այլ ուղղակի սեղմելով։

Ինչպես վերը տեսանք ուսումնասիրվող ժամանակաշրջանի արվեստագետը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես բնապաշտ և եթե ճիշտ են մեր կռահումները, ապա տիեզերքի վերաբերյալ պաշտամունքի տարրերը նույնպես առաջին անգամ իրենց արտացոլումն են գտնում վաղ բրոնզեդարյան արվեստում։

Այս բոլորը վերոհիշյալ խեցեղենի զարդանախշերի վերծանման առաջին փորձերն են, կռահումներ, որոնք կճշտվեն, կլրացվեն այլ ուսումնասիրողների կողմից։

Մի բան անժխտելի է, որ վաղ բրոնզեդարյան մարդն արդեն կարողանում էր տեսածը ոճավորելով վերարտադրել, նա գաղափար ուներ սիմետրիայի, ռիթմիկ կրկնությունների և կոմպոզիցիայի մասին։

Չնայած Շրեշ-բլուրի և Քյուլ-թափայի խեցեղենը կրում է յուրահատուկ տեխնիկական և գեղարվեստական գծեր, սակայն ունի որոշ զուգահեռներ վաղ բրոնզեդարյան այլ խեցեղենում։

Վերոհիշյալ կոմպոզիցիան ավելի շքեղ և հարստացած է հանդես գալիս Շենգավթի կարասի վրա, զարդարված թռչուններով, բազմագծյար պարույրներով և կեռագիծ ժապավեններով[2]։

Շենգավթի սափորների վրա կրկնվում է վերը նկարագրված կոմպոզիցիոն կմախքը բազմագծյար սպիրալային վերջավորություններով (№ 1330/45, 159), սակայն այստեղ այդ կոմպոզիցիան հանդես է գալիս լրիվ պարզեցված, առանց հավելյալ զարդարանքների (№ 1330/113)։ Թե կառուցվածքային, թե կատարողական տեխնիկայի և թե զարդամոտիվների տեսակետից հատկապես մեծ է նմանությունը Շենգավթի կճուճներ-գավաթների մի մասի հետ։ Օրինակ՝ Շենգավթի կճուճներից մեկի վրա (№ 1618 190) պահպանվել է վերը նշած կոմպոզիցիայի վերջավորությունը բազմագծյար պարույրով։ Կան կճուճներ, որոնց կոմպոզիցիոն կենտրոնը զարդարված է երկգծյար պարույրաձև մոտիվներով (1330 20)։ Էջմիածնի մոխրաբլուրների կճուճների վրայի (№ 604) խա-

2 Տե՛ս Պետ. պատմական թանգարանի ցուցասրահում, հրատարակված չէ։

չաձևվող ակոսների և նրանցով կազմված դաշտերում տեղավորված համակենտրոն շրջանագծերով կոմպոզիցիայի մի մասը կրկնված է նաև Շենգավթի կճուճի վրա (№ 1330/33)։ Այս նմանություններն այնքան մեծ են, որ կարծես նույն բրուտանոցում և նույն վարպետի ձեռքով կատարված լինեն։ Ցորենի հասկերի զարդամոտիվներ հանդիպում են նաև Շենգավթի զարդանախշերում, միայն մի փոքր այլ դասավորությամբ (№ 1412/6)։

Այսպիսով Շենգավթում այս զարդանախշերն ավելի շարժուն են, սահուն, երբեմն շատ պարզեցված։ Նավակաձև հիմքը բացակայում է և հիմնականում տրվում է կարճ ոտքերի վրա հենված զուգահեռ ժապավեններով կազմված անկյունը, որը վերևում ավարտվում է նույնպես բազմագալար պարույրներով (№ 1330/132—133, 45)։ Այստեղ բազմաշրջան համակենտրոն շրջանագծերը և երկգալար պարույրները այնպիսի զարգացում չեն ստանում, ինչպես էջմիածնի մոխրաբլուրների խեցեղենում։

Չնայած վերոհիշյալ նմանություններին, Շենգավթում նշված խեցեղենը հանդես է գալիս մի փոքր խմբով։ Շենգավթի խեցեղենի ճնշող մեծամասնությունը լիովին զանազանվում է էջմիածնի մոխրաբլուրների խեցեղենից։

Նավակաձև հիմքով և բազմագալար պարույրաձև վերջավորություններով վերոհիշյալ կոմպոզիցիան կրկնվում է Արագածի արևմտյան ստորոտում, Իգդիրի հովիտ Յայջի գյուղում հայտնաբերված խեցեղենի վրա։ Յայջիի խեցեղենի զարդամոտիվներում մենք հանդիպում ենք նույն բազմաշրջան համակենտրոն շրջանագծերին, անկյուն կազմող ակոսների զուգորդությամբ[3]։ Նման զարդանախշերի մասեր պահպանվել են այլ բեկորների վրա[4]։

Շրեշ-բլուրին և Քյուլ-թափային է հարում նաև Աղինի շրջանի Սառնադրյուր գյուղում հայտնաբերված խեցեղենը, որի բեկորներից մեկի վրա կրկնվում է վերոհիշյալ կոմպոզիցիայի թեր բազմագալար պարույրաձև վերջավորությամբ (№ 1547)։ Որոշ զուգահեռներ կարելի է գտնել նաև Կառնուտի (Դիրաքլար, Ախուրյանի շրջան) խեցեղենում, չնայած վերջինս մի շարք հատկանիշներով տարբերվում է էջմիածնի վերոհիշյալ մոխրաբլուրների խեցեղենից։

Կառնուտի խեցեղենում հանդիպում ենք նույն կոմպոզիցիոն կմախքին բազմագալար պարույրաձև վերջավորություններով, կենտրոնը զարդարված թռչնաձև զարդամոտիվով (№ 1478/1գբ, Շենգավթի կարասի նման), սակայն կատարված ռելիֆ զարդանախշման տեխնիկայով, ի հակադրություն վերոհիշյալ խոր լայնակոս տեխնիկայի։ Բացի այդ Կառնուտում կոմպոզիցիայի հիմքը նավակը չէ, այլ մեկ այլ զարդանախշ, որի ձևը վերականգնելը դժվար է, որովհետև խեցին այդ մասում կոտրված է։ Կառնուտի խեցու բեկորներից մեկի վրա կոմպոզիցիայի հիմքը կազմում է մի զարդանկար, որով հավանաբար ցանկացել են խարիսխ պատկերել (№ 1478/1)։ Այս բոլորը շեշտում է Կառնուտի խեցեղենի տեղային յուրահատկությունները։

Շրեշ-բլուրի և Քյուլ-թափայի նոոտանի պատվանդանների կոմպոզիցիոն նկարը (համակենտրոն շրջանագծեր, ակոսներ, բազմագալար պարույրներ առնված կարճ ակոսիկների համադրությամբ կազմված շրջանակների մեջ)

[3] C. A. Burney, Eastern Anatolia in the chalcolitic and Early Bronze Age. A. S. vol. VIII, 1958, էջ 43, 191, նկ. 130։ Այստեղ խեցու բեկորը շրջված է նկարված, պետք է նայել տակառակ կողմից։

[4] Նույն տեղում, նկ. 128։

[5] Նույն տեղում, նկ. 129, 132, 142, 143։

Կառնուտում կրկնվում է մեծ կավամանների վրա (№ 1478/3), սակայն վերոհիշյալ զարդանկարն այստեղ հանդես է գալիս ավելի բարդացված, ազուցված մանր սպիների խմբերով։ Հետևաբար, Կառնուտի խեցեղենը չնայած մեկ թևով կապվում է Էջմիածնի վերոհիշյալ մոխրարկուրների խեցեղենի հետ, սակայն ունի նաև տեղային հատկանիշներ, ինչպես նաև ժամանակագրական որոշ տարբերություններ։

Շրեշ-բլուրից և Քյուլ-թափայից հայտնաբերված խեցեղենն իր ձևով, որակով, կատարման տեխնիկայով, զարդամոտիվներով հանդիսանում է Հայկական լեռնաշխարհի հնագույն բրոնզեդարյան խեցեղենի վաղ փուլերից մեկը, որին բնորոշ են կատարման բարդ ձևեր, բարձր ճաշակ, գերազանցապես լայնակոս խոր զարդանախշ հստակ կոմպոզիցիոն պլանով և բնապաշտական մոտիվներով։ Վաղ բրոնզեդարյան խեցեղենը զարգացման իր վերջին փուլում կորցնում է կճուճների նոմասանիությունը, գնում է դեպի պարզեցումը սահուն անցումներով։ Զարդանախշերը ավելի են ոճավորվում (ամբողջի պատկերացումն արտահայտվում է մասերի միջոցով) և մասամբ ընդունում պիկտոգրաֆիկ ձևեր։

Շրեշ-բլուրի և Քյուլ-թափայի վերոհիշյալ խեցեղենում չնայած սկիզբ են առնում ուղղագիծ երկրաչափական զարդանախշերը, սակայն դրանք նրան բնորոշ չեն, իրենց զարգացման բարձրակետը ապրելով շենգավիթյան խեցեղենում, աստիճանաբար գնում են դեպի պարզեցում և հետզհետե անհետանում։

Ուսումնասիրվող խեցեղենում օջախիկ-հենակները հանդես են գալիս իրենց նախնական ձևերով, որոնցում նկատվում է մասերի անհամաչափություն, ձևի անկայունություն, իսկ դարաշրջանի վերջում, էլարյան խմբում նրանք իրենց վերջնական կայուն ձևն են ստանում։ Եռոտանի հենակները, ևս վերջին փուլում ավելի պարզ են դառնում, զրկվում զարդանախշումից, հստականում (օրինակ՝ Շենգավիթում, Գառնիում և այլուր)։

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան խեցեղենի զարգացման մեջ նկատվում է մեկ հիմնական գիծ, որը տանում է բարդից դեպի պարզեցումը։ Այն նկատվում է ինչպես խեցեղենի ձևերի զարդամոտիվների, այնպես էլ կատարման տեխնիկայի գծով։

Զարգացման այս գիծը լիովին պարզ է և պատճառաբանելի։ Այն պայմանավորված է դարաշրջանի փերջում տեխնիկայի նոր վերելքի և արտադրամիջոցների զարգացման շնորհիվ տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխություններով՝ երկրագործության և մասամբ անասնապահության վերելքով, որի շնորհիվ մի կողմից մթերքների պաշարները պահանջում էին խեցեղենի ավելի մեծ քանակ և օգտագործման համար ավելի պարզ և գործնական նշանակություն ունեցող ձևեր, մյուս կողմից փոխվում է նաև մարդու աշխարհաճանաչողությունը և այն ընդունում արտահայտման ավելի բարդ, վերացական ձևեր։ Առաջ են գալիս պաշտամունքային նոր տարրեր։

Նկատի ունենալով Շրեշ-բլուրի և Քյուլ-թափայի խեցեղենի վերոհիշյալ յուրահատկությունները, համարելով այն հնագույն բրոնզեդարյան խեցեղենի վաղ փուլերից մեկը, կարելի է մոտավորապես թվագրել մ. թ. ա. III հազարամյակի առաջին կեսով։

Է. ԵԱՆՋԱԳՅԱՆ